ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.07.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 24/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Ֆոտոն» ՍՊԸ-ի 23.06.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-24/15 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը և կից փաստաթղթերը, «Երևանի 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 29.06.2015թ. N-189 գրությունը և կից փաստաթղթերը և ԳԲԽ-24/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 10.07.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Ֆոտոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ֆոտոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 23.06.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 2015թ. հունիսի 11-ին «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կայացել է «ԵԹ197ՀԴ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով դպրոցական գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի բոլոր չափաբաժիններին մասնակցել է և նախնական տվյալներով 1-ին տեղ է զբաղեցրել «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն 2015թ. հունիսի 12-ին ծանուցմամբ Ընկերությունից պահանջել է հրավերի 7-րդ բաժնի 7.5 կետի 2-րդ և 3-րդ ենթակետով պահանջվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկի հիմնավորումը, ինչից էլ Ընկերությունը կարծել է, որ ներկայացրել է նախահաշվային գներից առնվազն 25 տոկոսով ցածր գին, այսինքն զգալիորեն տնտեսել է դպրոցի բյուջեն:

Ընկերությունը նշել է, որ նման ցածր գնային առաջարկը զարմանալիորեն չի գոհացրել Պատվիրատուին և վերջինս 2015թ. հունիսի 18-ի արձանագրությամբ 1-13 չափաբաժիններում ընտրված և գնային առաջարկի համեմատությամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հիմնավորումը համարել է ոչ բավարար և մերժել է՝ ինքնարժեքի հաշվարկի շեղումի պատճառաբանությամբ:

Ընկերությունը գտնում է, որ եթե Պատվիրատուն առաջնորդվեր 30.01.2015թ. ՀՀ կառավարության թիվ 105-Ն որոշման 51-րդ կետով և պահանջեր մեկօրյա ժամկետում վերանայել գնային առաջարկի և գնային առաջարկի հիմնավորման մեջ նշված ապրանքների ինքնարժեքների տարբերությունը, ապա կտեսներ, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ի տնօրինությունը հաշվի առնելով, որ շահառուն դպրոցն է, որոշել էր իր աշխատողներին վարձատրել ոչ թե միավորի հաշվարկով, այլ որպես պարգևավճար՝ ընկերության շահույթի հաշվին՝ դրանով իսկ իջեցնելով ապրանքի ինքնարժեքը:

Ընկերությունը հայտնել է, որ երբ առաջին տեղ գրավելուց հետո պահանջվել է ներկայացնել գնային առաջարկի հիմնավորում, ընկերության հաշվապահը թյուրիմացաբար տնօրենի հաստատմանն է ներկայացրել գնագոյացումը նախկին տեսքով, որն էլ ուղարկվել է իբրև գնային առաջարկի հիմնավորում, որի հետանքով էլ տեղ է գտել ինքնարժեքի հաշվարկի շեղումը գնային առաջարկի և գնային առաջարկի հիմնավորման միջև, ընդ որում, առաջարկված գինը մնացել է անփոփոխ:

«Ֆոտոն» ՍՊԸ-ն գտնում է, որ Պատվիրատուն չի հետևել 30.01.2015թ. ՀՀ կառավարության թիվ 105-Ն որոշման 51-րդ կետին, ըստ որի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, ինչը չի արվել գնահատող հանձնաժողովի կողմից:

Ընկերությունը խնդրել է «Ֆոտոն» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

2. «Երևանի 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Ֆոտոն» ՍՊԸ-ի 23.06.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ «Երևանի 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 29.06.2015թ. թիվ 189 գրությամբ հայտնել է, որ 2015թ. հունիսի 11-ին կայացել է «Երևանի 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԵԹ197ՀԴ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով դպրոցական գույքի ձեռքբերման նպատակով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացումը:

Պատվիրատուն հայտնել է, որ նշված ընթացակարգին մասնակցած «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներակայցված ցածր գինը չի տնտեսել Պատվիրատուի ֆինանսական միջոցները, այլ հիմք է տվել, առաջնորդվելով ՀՀ կառավարության 30.01.2015թ. թիվ 105-Ն որոշմամբ, պահանջել փաստաթղթեր՝ մասնակցի օրինական գործունեության և պատվիրատուին անհրաժեշտ որակով ապրանքներ մատակարարելու ցանկության և հնարավորության մեջ համոզվելու համար:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովի կողմից որոշվել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հիմնավորումները համարել ոչ բավարար և մերժել հետևյալ պատճառաբանությամբ.

- «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների գնագոյացման մեկ միավորի ինքնարժեքի հաշվարկը ՀՀ դրամով չի համապատասխանում բոլոր չափաբաժիններում իր իսկ կողմից ներկայացված գնային առաջարկին (ինքնարժեքի անհամապատասխանություն),
- 2-րդ, 4-րդ և 12-րդ չափաբաժիններում ակնհայտ երևում է իր իսկ կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի անհամապատասխանություններ,
- մեկ միավորի գնագոյացման լրացման ձևը ստեղծում է խոչնդոտներ ճիշտ գնահատման և տեխնիկական բնութագրի հետ համեմատություն կատարելու համար,
- հնարավորության դեպքում 1-ին չափաբաժնի լրացման ձևի վրա հիմնվելով՝ ակնհայտ է դառնում տարբեր չափաբաժիններում լամինատի անհրաժեշտ կտորների քանակի անհամապատասխանություն տեխնիկական բնութագրերի հետ, PVC-ի պահանջվող քանակի (սմ) և եզրերը PVC-ապատվող կտորների չափերի անհստակություն,
- վերոնշյալ կետերը առաջացնում են անվստահություն «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից առաջարկված ապրանքների որակների վերաբերյալ:

Պատվիրատուն նշել է, որ գնային առաջարկը չի հանդիսանում հայտարարություն և 30.01.2015թ. թիվ 105-Ն 45-րդ կետի համաձայն՝ հրավերի պահանջներին անհամապատասխան լրացնելու, կամ չլինելու դեպքում հայտը մերժվում է, իսկ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հենց գնային առաջարկի գնագոյացման սխալ լրացված և գնային առաջարկին չհամապատասխանող փաստաթուղթ:

Պատվիրատուն «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սխալմունքի պատճառաբանությունը համարում է անհիմն, քանի որ գնագոյացումից է առաջանում գնային առաջարկում նշված ինքնարժեքը, այլ ոչ թե հակառակը, հետևաբար հաշվապահի սխալը պետք է արտացոլվեր գնային առաջարկում, միևնույն ժամանակ ի նկատի ունենալով առաջարկվող ապրանքների քանակը և ծավալը՝ 314 կտոր գույքի համար անհավատալի է դառնում աշխատավարձ վճարելը եկամտի հաշվին, ինչպես նաև «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված /ճշտված կամ իրական/ գնագոյացումում չեն հանվել միայն աշխատավարձերը, այլ փոխվել են նաև լամինատի գները, իսկ որոշ չափաբաժիններում ընդհանրապես փոփոխություններ չեն արվել:

Վերոհիշյալ փաստերը և ներկայացված բողոքի բովանդակությունը տեղիք են տալիս համարելու, որ «Ֆոտոն» ՍՊԸ-ն մասնակցել է «ԵԹ197ՀԴ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով ընթացակարգին առաջնորդվելով ինչ որ նախընտրելի մասնակցին խոչընդոտելու համար, սակայն, երբ հասկացել է, որ այդ նախընտրելի մասնակցը նույնիսկ չի մասնակցում, միտումնավեր ներկայացրել է այնպիսի փաստեր, որ մերժվի և չկրի անտեղի վնասներ:

2011-2014թթ. ընկած ժամանակահատվածում տարբեր կազմակերպությունների («Երեքնուկ» ՍՊԸ, «ՏԻՍԱ» ՓԲԸ, «Հայկազունք» ՍՊԸ) անուններով, սակայն նույն «Ֆոտոն» ՍՊԸ-ի աշխատակազմով «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտների համար սննդի փաթեթներ են մատակարարվել և այդքան ժամանակահատվածում վերոնշյալները չունեն առիթ կասկածի տակ դնելու «Երևանի թիվ 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի արժանապատվությունը, այլ ընդհակառակը, դպրոցն է ստիպված եղել պահանջներ ներկայացնել նրանց սննդի որակը բարձրացնելու համար:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ բողոքն անհիմն է:

3. ԳԲԽ-24/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 10.07.2015թ. եզրակացությունը և առաջարկել է «Ֆոտոն» ՍՊԸ-ի 23.06.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-24/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-24/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար դպրոցական գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵԹ197ՀԴ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի բոլոր չափաբաժիններին մասնակցել է նաև «Ֆոտոն» ՍՊԸ-ն:

2. Երևանի քաղաքապետարանի «Երևանի 197 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի նախահաշվով հաստատված հիմնական միջոցների (աշակերտական գույքի) ձեռքբերման համար հատկացվել է 5500000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. «Ֆոտոն» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմել է 3.144.647 ՀՀ դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.06.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի արձանագրությամբ որոշում է կայացրել Ընթացակարգի 1-ից 13-րդ չափաբաժիններով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Ֆոտոն» ՍՊԸ-ին:

5. Պատվիրատուն 12.06.2015թ. գրությամբ Ընթացակարգի հրավերի 7-րդ բաժնի 7.5 կետի 2-րդ և 3-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցել է «Ֆոտոն» ՍՊԸ-ին՝ որպես բոլոր չափաբաժիններով առաջին տեղն զբաղեցրած մասնակցի գնահատող հանձնաժողովին ներկայացնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրած հայտարարությունները հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում նաև գնային առաջարկը հիմնավորող փաստաթղթերը:

6. «Ֆոտոն» ՍՊԸ-ն 15.06.2015թ. գրությամբ ներկայացրել է հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը

հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև «ԵԹ197ՀԴ-ՊՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու արդյունքում Ընկերության կողմից ներկայացված ապրանքների գնագոյացումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.06.2015թ. ժամը 11:00-ի թիվ 7-րդ արձանագրության 2-րդ կետով կայացրած որոշմամբ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հիմնավորումները համարել է ոչ բավարար:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Պատվիրատուն, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված պահանջները, 12.06.2015թ. ծանուցմամբ Ընկերությանը խնդրել է ներկայացնել գնահատող հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի հիմնավորումները, այդ թվում նաև գնային առաջարկի հիմնավորում՝ գնային առաջարկով ներկայացված ապրանքների գնագոյացումը:

«Ֆոտոն» ՍՊԸ-ի 15.06.2015թ. գրությամբ ներկայացված ապրանքների գնագոյացման մեջ ներկայացված ապրանքների ինքնարժեքները գերազանցել են ներկայացված գնային առաջարկի ապրանքների ինքնարժեքները, ինչն էլ հիմք է հանդիսացել Պատվիրատուի համար անբավարար համարել ներկայացված հիմնավորումը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից Կարգի 51-րդ կետի պահանջների խախտման վիճարկմանը, ապա Խորհուրդը գտնում է, որ վերոհիշյալ կետը կիրառվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու, այլ ոչ թե մասնակցի կողմից գնային առաջարկը հիմնավորող փաստաթղթերը շտկելու նպատակով: Ուստի Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«Ֆոտոն» ՍՊԸ-ի 23.06.2015թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ **Արթուր Բաղդասարյան**

Հարություն Մարտիրոսյան